



ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏՅԱՆ

## ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՀԱՅՈՑ ՄԵԾ ԹՎԱԿԱՆ

Արդի հայ տոմարագիտության մեջ լայնորեն տարածված է այն տեսակետը, համաձայն որի, Հայոց Մեծ Թվական կոչվածը՝ 365-օրյա տարիներով մի շարժական տոմար է [1, 2, 3]: Այս տեսակետը, սակայն, միակը չէ և գոյություն ունի նաև հակառակ մտեցումը, ըստ որի խնդրո առարկա տոմարը եղել է անշարժ [4]: Առաջին տեսակետի համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ Հայոց տասներկու ամիսները ավելյաց հինգ օրերի հետ միասին պարունակում են 365 օր, որը 1/4 օրով պակաս է Հուլյան տարվա տևողությունից: Այս մեկ քառորդ օրերը, գումարվելով 1460 տարվա մեջ, կազմում են մեկ լրիվ տարի: Այսինքն՝ 1460 տարի պարբերությամբ Հայոց ամսաթվերը կը պըտտվեն և այդքան ժամանակը մեկ կվերադառնան Հուլյան նույն ամսաթվերին: Եվ եթե որպես Հայոց տարեմուտ ընդունենք նավասարդի մեկը, ապա կունենանք իրոք շարժական տոմար, որի տարեմուտը 1460 տարում,

շրջելով Հուլյան տարվա բոլոր օրերի վրայով, կվերադառնա նույն օրվան: Երկրորդ տեսակետի համաձայն, սակայն, տարեմուտը չի կապվում նավասարդի մեկի հետ, և չորս տարին մեկ օր նահանջելով միշտ մնում է Հուլյան տոմարի նույն օրվա վրա: Օրինակ, եթե նահանջ տարին սկսվել է նավասարդի մեկով, ապա այն նավասարդի մեկով էլ կավարտվի և հաջորդ տարին կսկսվի նավասարդի երկուսով:

Պարզելու համար, թե նշված կարծիքներից որն է ավելի համապատասխան իրականությանը, թեթևակի անդրադառնանք այն հարցին, թե ինչի համար էր ստեղծված Հայոց Մեծ Թվականը, ինչի համար էին կազմված ՇԼԲ բոլորակները: Հիմնական հարցը, որ կոչված էին լուծելու հիշյալ բոլորակները, եկեղեցական տոների օրերի որոշումն էր: Նիկիո տիեզերական ժողովի որոշմամբ Աստվածահայտնությունը միշտ պետք է տնվեր հունվարի վեցին, զարևունային գիշերահավասարը (հասարակած) պետք է միշտ լիներ մարտի քսանմեկին, իսկ Չատիկը՝ դրան հաջորդող լիալուսնից հետո առաջին կիրակին: Ինչպես տեսնում ենք, և՛ Աստվածահայտնությունը, և՛ Չատիկը որոշելու համար անհրաժեշտ գարնանային գիշերահավասարը կա-

<sup>1</sup> Չ դարում ընդունված այս օրացույցը հաճախ կոչվել է նաև «թուականություն Հայոց», «թուականություն Հայկապետայց տոհմին», «Ասքանապետան րուական» և այլ անուններով:



յուն կապված էին Հռոմեական տոմարի<sup>2</sup> որոշակի օրերը հետ, որոնք, ի դեպ, անշարժ են: Բնական հարց է առաջանում. ինչպե՞ս կարող էին անշարժ տոմարով որոշվող եկեղեցական տոները տրվել մի տոմարով, որի տարին շարժական է: Հույժ անհավանական է, որ իր անշարժ տոները որոշելու համար Եկեղեցին սրբագործեր մի շարժական տոմար: 365-օրյա տարով շարժական տոմար օգտագործելու դեպքում, Աստվածահայտնությունն ու Չատիկն էլ, ըստ Նիկիո տիեզերածողովի որոշման, տոներու պարագային Հայոց Եկեղեցին ստիպված պիտի լիներ հայկական 1461 տարվա մեջ տունել 1460 Աստվածահայտնություն և Չատիկ, քանի որ 1461 աննահանջ տարին ճշգրիտ հավասար է 1460 նահանջավոր Հուլյան տարվա (1461 X 365 = 1460 X 365,25): Այն, որ Հայոց Մեծ Թեմականի ընդունման ժամանակ հայերը տեղյակ էին 1460-ամյա շրջանին, կասկածից վեր է (տե՛ս, օրինակ, [5], էջ 66, գլուխ ԺԹ): Ուստի, արամաբանական է ենթադրել, որ նման բյուրիսացության տեղիք տվող տոմար չէր կարող ընդունվել: Ավածից կարելի է հանգել միայն մեկ ելրակացության. այն, որ Հայոց Մեծ Թեմականը եղել է անշարժ:

Անշուշտ հարցի պարզաբանման համար ըստ կարևոր են ոչ միայն արդի տոմարագետների, այլև այդ տոմարի հիմնադիրների ու կարգավորողների տված բացատրությունները: Առաջին կարկառուն դեմքը մեր իրականության մեջ, որ պետք է տոմարով, Անանիա Շիրակացին է: Նայենք, թե նա ինչ տեղեկություններ է տալիս Հայոց տոմարի մասին: Իր Հայտնության ճառի մեջ [6] բավանհմուտ գիտնականը գրում է. «Բազում աշխատություն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տանից Աստուծոյ էր յոր հասաքս և Կոր ճառել արժանատր եղաք. նախ Կտանն Ճնդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է սկիպն տանից և տարեկանաց մերոց, և զլուխ [կարգաց] և ամենայնից ի Քրիստոս յիշատակաց» (ընդգծումը մերն է): Ծննդյան տոնը այստեղ համարվում է «սկիպն տանից և տարեկանաց մերոց»: Սակայն, ինչպես նշվեց վերևում, Ծննդյան տոնը 325 թ. Նիկիո տիեզերածողովով որոշվել էր տունել միշտ նույն օրը՝ հունվարի 6-ին, ըստ Հռոմեական տոմարի, որն անշարժ է: Այսինքն՝ Հուլյան անշարժ տոմարով որոշվող հունվարի 6-ը «է սկիպն տանից և տարեկանաց մերոց»: Շարժական տոմարով առաջնորդ-

<sup>2</sup> Խոսքը Հուլյան տոմարի մասին է, որը թեև բացարձակապես անշարժ չէ և մեկ օրվա սխալ է անում 128 տարում, սակայն, տվյալ պարագայում դա կարելի է և պետք է անշարժ համարել:

վող ժողովրդի ու Եկեղեցու համար տարօրինակ պիտի լիներ նման հայտարարությունը: Իրոք, ինչպես կարող էր անշարժ օրը կապվել շարժական տոմարի տարեմուտի հետ և միշտ լինել «տարեկան տոների սկիպը»: Հույժ կասկածելի է, որ բավանհմուտ գիտնականը տեղյակ չլիներ այս հանգամանքին կամ անտեսեր այն: Ուստի, կարելի է վստահ ելրակացնել, որ Անանիա Շիրակացին այս պարագայում նկատի է ունեցել մի անշարժ տոմար: Իր նույն Հայտնության ճառի վերջում, տալով տարբեր ազգերի օրացույցներով Ծննդյան օրը, հեղինակը Հայոց համար գրում է. «Յայտնութիւն ըստ Հայոց փոփոխմամբ է ըստ չորից չորից ամաց»: Ավածը պարզ է դառնում, եթե նկատի ունենանք, որ Հայոց ամսաթվերով նույն օրը կրկնվում է 365 օր պարբերությամբ, իսկ դա 1/4 օրով կարճ է Հուլյան տարվա տևողությունից: Այսինքն՝ չորս տարին մեկ կփոխվի հունվարի վեցին համապատասխանող հայկական ամիս-ամսաթիվը: Ավածից կարելի է ելրակացնել, որ Հայոց Մեծ Թեմականն ընթացել է Կուգահեռ Հուլյան տոմարի հետ և Կուգահեռություն չի եղել միայն հայոց ու հռոմեական ամսաթվերի՝ միջև: Նշենք նաև, որ հենց այս կերպ է մեկնում Հայոց տոմարը Հ. Իգնատիոս Ադամյանը [4]: Այժմ նայենք, թե ինչ է ասում այս մասին Անանիա Շիրակացու կապված ՇԼԲ աղյուսակը:

Ըստ այդ ՇԼԲ բոլորակի [7], Հայոց Ա(1) թվականի Չատիկն եղել է մարտի ԺԳ (14)-ին, որի դիմաց ունենք հռոմեական արթիկի 20-ը, իսկ ըստ Ֆ. Գինցելի տված Կատկացուցակի [8], ապրիլի 20-ին Չատիկ եղել է 553 թվականին: Հաջորդ՝ Բ(2) տարվա Չատիկն ահեկի ԻԹ (29)-ին է, որի դիմաց կա ապրիլի 5-ը, իսկ ըստ նշված Կատկացուցակի, ապրիլի 5-ին Չատիկ եղել է 554 թվին: Անանիա Շիրակացու ՇԼԲ աղյուսակի և հիշյալ Կատկացուցակի Կուգահեռությունը պահպանվում է բոլոր 532 տարիների համար. մինչև աղյուսակի վերջը: Վերջին՝ ՇԼԲ (532) տարվա Չատիկը հոռի Բ(2)-ին է, որին այդ տարի համապատասխանել է մարտի 31-ը: Համաձայն Ֆ. Գինցելի Կատկացուցակի, մարտի 31-ին Չատիկ եղել է 1084 թվին: Այսինքն՝ պարզվում է, որ Հայոց Մեծ Թեմականով անցած 531 տարիների դիմաց ունենք հռոմեական օրացույցով անցած դարձյալ 531 տարի (Հայոց Ա-ից ՇԼԲ և հռոմեական 553-ից 1804): Որքանով է հնարավոր այսպիսի Կուգահեռությունը Հայոց տոմարի շարժական լինելու պարագայում: Շարժվելով հռոմեական տարբեր ամսաթվերի վրայով, տարեմուտը կարող էր համընկնել նաև զարնանային գիշերահավասարի օրվա հետ,



որը ՀԼԲ բոլորակի հեղինակը համարել է մարտի 20-ը<sup>3</sup>: Իսկ եթե տարեմուտը (որը Հայոց Մեծ Թվականը շարժական տոմար համարողները միշտ կապում են նավասարդի մեկի հետ) համընկնի գիշերահավասարի հաջորդ օրվան՝ մարտի 21-ին, և հռոմեական համապատասխան տարին էլ լինի նահանջ, այսինքն՝ պարունակի 366 օր, ապա Հայոց հիշյալ տարին պետք է որ գարնանային գիշերահավասարի օր չպարունակի, հետևաբար նաև Չատիկ էլ չի կարող ունենալ, քանի որ Նիկիո տիեզերածոդովի որոշմամբ Չատիկը տոնվում է գարնանային հասարակածին հաջորդող լիալուսնից հետո առաջին կիրակին: Նման համընկնում տեղի է ունեցել Հայոց ՆԾԲ (452) թվականին: Դրան նախորդող ՆԾԱ (451) տարին գարնանային գիշերահավասարը ավելյաց Ե(5)-ին է եղել, հետևաբար, եթե տարեմուտը նավասարդի Ա-ն է, ուրեմն ՆԾԲ տարին պետք է սկսվի հռոմեական 1003 թվականի մարտի 21-ին: Քանի որ դրա հաջորդ տարին նահանջ է, ուրեմն Հայոց Մեծ Թվականի ՆԾԲ տարին պետք է ավարտվի մարտի 19-ին, իր մեջ չպարունակելով մարտի 20-ը: Ուստի, այդ տարին պետք է նաև Չատիկ չունենա: Սակայն, ինչպես ցույց է տալիս ՀԼԲ բոլորակը, նման քան չկա: Հայոց բոլոր տարիներն էլ պարունակում են գարնանային գիշերահավասարի օրը և ունեն իրենց Չատիկը:

Նույն օրինաչափությունը պարզ երևում է նաև Հովհաննես Իմաստասերի տված ՀԼԲ աղյուսակում [9]: Այս տոմարի մասին, որը կոչվել է Հայոց Փոքր, Մտրուկ կամ Սարկավագադիր թվական, կարծիքները բարեբախտաբար չեն տարամիտում, ինչպես նախորդի դեպքում էր: Ընտրիվ ամիսների անշարժություն, այս տոմարը թյուրիմացությունների տեղիք չի տվել: Ի տարբերություն Անանիա Շիրակացու ՀԼԲ բոլորակի, այստեղ Չատիկ և մյուս տոների օրերը տրված են միայն հռոմեական ամսաթվերով: Սակայն, նախորդի նման, այս աղյուսակը ևս պարունակում է 532 տարի, որոնցից յուրաքանչյուրը, բնականաբար, ունի իր Չատիկը: Այս բոլորակի Ա(1) տարին Չատիկը եղել է ապրիլի 20-ին և համաձայն մեր հիշատակած պատկացուցակի, ապրիլի 20-ին Չատիկ է եղել 1085 թվին: Իսկ, ինչպես վերևում տեսանք, Շիրակացու կազմած ՀԼԲ բոլորակի վերջին տա-

րին համապատասխանում է 1084 թվականին: Այսինքն՝ այս ՀԼԲ աղյուսակը նախորդի շարունակությունն է: Սրա վերջին՝ ՀԼԲ (532) տարին Չատիկը մարտի 31-ին է եղել: Ըստ Ֆ. Գինցելի պատկացուցակի, այդ օրը Չատիկ եղել է 1616 թվին, երբ հին տոմարով Չատիկն իրոք մարտի 31-ին է եղել: Այստեղ հարկ է նշել նաև Հովհաննես Իմաստասերի կատարած տարեմուտի փոփոխության մասին, որով նավասարդի մեկը 164 օրով տեղափոխվում և կապվում է օգոստոս 11-ին: Մի կողմ թողնելով այս փոփոխության պատճառների քննարկումը՝ նշենք միայն, որ այն բնավ հետք չի թողել Սարկավագի ՀԼԲ բոլորակում: Այդ բոլորակը կարելի է դիտել և՛ իբրև նախորդի՝ Անանիա Շիրակացու կազմած ՀԼԲ աղյուսակի ուղղակի շարունակություն, և՛ իբրև փոխված տարեմուտով (օգոստոս 11-ին) անշարժ օրացույց, որն սկսվում է 1084 թ. օգոստոս 11-ից: Վերջին դեպքում Սարկավագի ՀԼԲ աղյուսակի տարվա առաջին օրը կտարբերվի Շիրակացու աղյուսակի տարեմուտից այնքան օրով, որքան օր կա օգոստոսի 11-ից մինչև այդ տարեմուտը<sup>4</sup>, և դարձյալ կարելի է այն դիտել իբրև Անանիա Շիրակացու ՀԼԲ բոլորակի շարունակություն՝ հաշվի առնելով, անշուշտ, նշված տարբերությունը:

Նշված աշխատություններից պատասխանատու է վկայում նաև Հովհ. Իմաստասերի «Սառնախորանը» [10]: Այստեղ նավասարդի մեկը նշվում է որպես «տարեմուտ Սարկավագին»: Ի՞նչ պատճառով է նման նշումն անհրաժեշտ համարվել: Պատճառը կարող է լինել այն, որ Հովհ. Իմաստասերից առաջ այդ օրը չի դիտվել իբրև տարեմուտ: Բացի այդ, Սարկավագի անվան շեշտումը ևս հուշում է, որ նավասարդի մեկի տարեմուտ լինելը կապվում է հենց վերջինիս հետ, և նա է, որ այդ օրը դարձրել է տարեմուտ:

Նայենք նաև, թե ինչպես են իրար հարաբերում Հայոց թվականի տարիների և այդ տարիների պարունակած Աստվածահայտնությունների ու Չատիկների քանակները: Անանիա Շիրակացու ՀԼԲ բոլորակը ընդգրկում է 532 տարի և հենց այդքան էլ Աստվածահայտնություն ու Չատիկ է պարունակում: Նույնն է դրությունը նաև Հովհաննես Սարկավագի ՀԼԲ աղյուսակի պարագալում, որը, ինչպես տեսանք, շարունակությունն է նախորդ ՀԼԲ բոլորակի: Այստեղ ևս 532 տարիներին համապատասխանում են 532 Աստ-

<sup>3</sup> Մեր քննության նյութից դուրս է այն հարցը, թե ինչու՞ մարտի 20-ը և ոչ թե 21-ն է դրվել գարնանային հասարակածի դիմաց: Այդ մասին բավական ընդունելի մի բացատրություն է տրված Հ. Ի. Աբամյանի կողմից [4]: Չեն բացառվում, սակայն, այլ բացատրություններ ևս:

<sup>4</sup> Իր տեղում կտեսնենք, որ Մեծ թվականի տարեմուտը հունվարի մեկն է եղել, ուստի այդ տարբերությունը հավասար է օգոստոս 11-ից հունվարի մեկը եղած օրերի քանակին, որը 143 է:



վածահայտնության և Չատկի տոներ: Այսինքն՝ իրար շարունակող այդ երկու ՇԼԲ աղյուսակները, որ միասին ընդգրկում են 1064 տարի (կամ դրանից 143 օր պակաս), այդքան էլ Աստվածահայտնություններ ու Չատկիներ են պարունակում:

Ավելորդ չէ նշել, որ Հայոց տոմարը անցյալում ևս միշտ չէ, որ հասկացվել և կիրառվել է վերոհիշյալ ձևով: Դեռևս Հովհաննես Իմաստասերից առաջ եղել են տոմարի թյուր կիրառություններ, որոնց հետևանքով ժԱ դարում հայոց մոտ տոմարական խառնաշփոթ է առաջացել: Հովհաննես Սարկավազն իր աշխատություններում անխնայ քննադատել է այդ թյուր մեկնությունները և ջանացել է ուղղել դրանց հետևանքով առաջացած սխալները: Այդ սխալների և դրանց առաջացման պատճառների մասին կխոսենք սույն շարքի հաջորդ հոդվածում: Իսկ առայժմ նրանք, որ և՛ Անանիա Շիրակացու, և՛ Հովհաննես Իմաստասերի տոմարական աշխատությունների քննությունը թույլ է տալիս վստահ պնդել, որ Հայոց Մեծ Թվականը, ինչպես Հայոց Փոքր Թվականը, եղել է անշարժ, չնայած մեր մատենագրության մեջ սակավ չեն նաև դրա սխալ կիրառման օրինակները:

Ի մի բերելով վերևում ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ Հայոց տոմարը եղել է անշարժ: Հայոց Մեծ Թվականի տարեմուտն էլ եղել է անշարժ և ընթացել է պուգահեռ Հուլյան տոմարի տարեմուտի հետ: Բացի այդ, Շիրակացու Հայտնության ճառից վերևում տրված մեջբերումից հետևում է, որ տարեմուտն եղել է հունվարի վեցից առաջ, և նրա ու հունվարի վեցի միջև ոչ մի եկեղեցական տոն չի եղել: Սույն պայմաններին յավագույնը բավարարում է հունվարի մեկը: Այսինքն՝ Հայոց Մեծ Թվականի տարեմուտն եղել

է միշտ հունվարի մեկը ըստ Հուլյան տոմարի, որը, սակայն, ըստ Հայոց ստանաթվերի, փոփոխվել է չորս տարին մեկ: Այստեղից հետևում է, որ Հայոց Մեծ Թվականն սկսվել է Հուլյան տոմարով 553 թ. հունվարի մեկին՝ չորեքշաբթի օր, որը Հայոց ստանաթվով եղել է արաց ԻԵ (25):

Անբողջ ասվածն ամփոփելով՝ կարող ենք գրել հետևյալ առնչությունը Հայոց Մեծ և հունեական Հուլյան թվականների միջև.

Հայոց Մեծ Թվականը = Հուլյան թվականից - 552, և կամ՝

Հուլյան թվականը = Հայոց Մեծ Թվականին + 552:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Հայոց Մեծ և Հուլյան թվականների միջև կապը ժայռահորեն պարզ է ու մեկին:

1. Բ. Ե. Թումանյան, Հայ ստանդարտության պատմություն, Երևան, 1964:

2. Հ. Ս. Բաղդասարյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970:

3. Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, Երևան, 1972:

4. Հ. Ի. Աղամյան, «Բազմալեզ», 1966 թ., էջ 183, 216:

5. Անանիա Շիրակացի, Տիպերագրություն և տոմար, Երևան, 1940:

6. Ա. Գ. Արքատիան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 283:

7. Այդ, էջ 263:

8. F. Ginzler, Handbuch der mathematischen und technischen Chronologie, Leipzig, 1914, III B, p. 411.

9. Ա. Գ. Արքատիան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 191:

10. Ա. Գ. Արքատիան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 159:

